ՄԱՆԱՉԿԵՐՏԸ ԲՅՈՒԶԱՆԴԱ-ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

(IX դարի երկրորդ կես—X դար)

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունն իր բոլոր երանգներով արտահայտվել է հատկապես Հայաստանի և նրան հարևան երկրների հանդեպ։ Այդ քաղաքականության առավել ցայտուն դրվագներից է Դավիթ Կյուրապաղատի միջոցով Հայաստանի զգալի մասին տիրելու Հիշյալ ակտի իրագործման ուղղությամբ Վասիլ II-ը, շատ լավ տիրապետելով Բյուզանդիայում դարեր շարունակ մշակված նվաճողական քաղաքականության «արվեստին», Վարդ Սկլերոսի (976—979) ապստամբության ծանր ժամանակաշրջանում կրկնակի շահավետ քայլի է դիմում. «Վասիլ թագաւորն Յունաց զԹոռնիկ զօրավարն, որ էր յազգէն Վրաց, աբեղայ և սուրբ լերինն՝ հանեալ առաքէ առ կիւրապաղատն Տայոց Դաւիթ. և խոստանայ տալ նմա զխաղտոյառիճ Կղէսուրաւն, զՁորմայրի և զԿարին, զԲասեան և զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի, զՀարք և Ապահունիս (զորս և ետ իսկ), որպէս զի զօր առաքեսցէ, յօգնականութիւն նմա։ Եւ կիւրապաղատին Դաւթի գումարեալ զզօրսն Վրաց, և զիշխանաց իշխանն զՁոչիկ տայ զկնի Թոռնկայ՝ պատերազմել ընդ Վարդայ բռնակալին։ Որք սկսեալ ի Տայոց աշխարհէն՝ քանդեալ աւերեցին զամենայն աշխարհն Յունաց, որ ընդ ձեռամբ բռնակալին»,— գրում է Ասողիկը[1]։

Դավիթին խոստացվող հողերից կայսրությանն էին պատկանում «խաղտոյառիճ Կղէսուրաւն» [խաղտոյառիճը և Բռնակապանը մինչև Բասենի արևմտյան սահմանը ընկած լեռնանցքների սիստեմը (կղեսուրք), որը հայտնի էր «Իլլիրիա» (հմմտ.— Աղորի) անունով], Ձորմայրին, Կարինը, Բասենի այն մասը, որը գտնվում էր Մուրցից հարավ և «զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի» (Մարդաղի գավառը Սևուկ բերդակով, որը շատ կարևոր ռազմական նշանակություն ունեցող վայրում էր կառուցված և պահպանում էր Երասխի արմունկից վեր Հավճիչ բերդի պահպանած առաջին գետանցից հետո երկրորդ գետանցը)[2]։ Ապստամբության տարիներին կայսրությունը փաստորեն զրկվել

---

[1] *«Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 192—193։*

[2] *Հավճիչը Երասխի աջ ափին էր՝ «Աղորի աշխարհում», որը ընկած էր Մարդաղի, Դասնավորք և Հավնունիք գավառների միջև և, իհարկե, կազմված էր այդ գավառների՝ Երասխի ափամերձ շրջանում գտնվող համապատասխան մասերից։ «Աղորին» ֆիզիկա-աշխարհագրական միավոր էր ռազմա-ստրատեգիական նշանակությամբ և այդ տեսակետից պատահական չէ, որ նշված գավառների համապատասխան շրջանները միասին վերցրած կարող էին «Աղորի» նշանակել, որը, ինչպես ցույց ենք տվել, համապատասխանում է* Halōras, Halūris *[Ն. Ադոնցը ենթադրում է, որ այն կարող էր ծագել հայերեն* Olor*-ից (*Ալոր—Է. Դ.), տե՛ս* Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, *էջ 11, ծան. 3]*, Ἰλλουρίσος (Ἰλλυρία) *անվանը՝ կապված կղեսուրքների՝ լեռնային ամրությունների տարածման շրջանների հետ [ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 10, էջ 66]։*

էր մինչ այդ իրեն անցած նշված տիրույթներից, սակայն դրանք Դավիթին խոստանալու ավելի իրական հիմքեր ուներ, քան Հարքը և Ապահունիքը, քանի որ այս երկուսը կարճ ժամանակահատվածներով էին նվաճված եղել և կայսրությանը ենթակա էին դիտվում քաղաքական այն դոկտրինայի համաձայն, ըստ որի «այն քաղաքները և շրջանները, որոնք գտնվում էին կամ գտնվում են կայսրության վասալների (իմա՝ հայ Բագրատունիների) գերագույն իշխանության տակ, դրանով իսկ Բյուզանդիային ենթակա են դառնում»[3]։

Արաբների կողմից Հայաստանի՝ Բյուզանդիային անցած մասին տիրելուց հետո կայսրությանը միայն X դարի 20-ական թթ. վերջերից է հաջողվում իր ազդեցությունը որոշ չափով տարածել Վանա լճից հյուսիս ընկած շրջանների վրա։ Իսկ մինչ այդ, Աշոտ I Բագրատունուց սկսած, դրանց վրա ունեցած սյուզերենական իրավունքները կայսրությունը հաստատում էր նշված սկզբունքով, ըստ որի՝ իր վասալի վասալը իր վասալն էր։

Կայսրության ուշադրությունը, բացի Թեոդոսուպոլսից և Տարոնից[4], եղել է նաև Ապահունիքի (Մանազկերտ կենտրոնով) և դրանից հարավ՝ Վանա լճի ափամերձ շրջաններում գտնվող Խլաթ, Արճեշ և Բերկրի ամրությունների վրա, քանի որ եթե սրանք «գտնվեն կայսեր ձեռքում, ապա պարսկական (արաբական— Է. Դ.) զորքը Ռոմանիայի (Բյուզանդիայի— Է. Դ.) դեմ դուրս գալ չի կարող, որովհետև ամրոցները, գտնվելով Ռոմանիայի և Հայաստանի միջև, պատնեշի և զորակայանի դեր են խաղում»[5]։

Այս տերիտորիայի պատմությունը մանրամասն տալիս է Ծիրանածինը. «Մանազկերտին էր տիրում Ապելվարդը, որ գտնվում էր իշխանաց իշխան Աշոտի՝ իշխանաց իշխան Սմբատի հոր իշխանության ներքո»[6]։ Հայտնի է, որ Բուղայի արշավանքից մեծագույնս օգտվեց «սուլայմ ցեղին պատկանող Մանազկերտի ամիրայական տունը (հայկական աղբյուրներում պարզապես՝ կայսիկ), որը Թ դարի 60-ական թթ. արդեն Ապահունիքի տերն էր»[7]։

Ծիրանածինի հաղորդումից երևում է, որ Աբու-լ-Վարդը Աշոտ Բագրատունու կողմից ինչ-որ ժամանակ ճանաչվել էր Մանազկերտի տերը[8]։

Կայսիկները, ինչպես ցույց է տալիս դեպքերի հաջորդականությունը, երբեք պատեհ առիթը չեն կորցրել դուրս գալու հայ նախարարների և հատկապես հայ Բագրատունի թագավորների դեմ։ Երբ դեռևս ուժեղ էին Շայբանիները, կայսիկները, նրանց ուժն ու հովանավորությունը զգալով, դավեր էին

---

3 К. Н. Юзбашян, Повествование Аристакэса Ластиверци и закат «Эпохи Багратидов» (автореферат докторской диссертации), Ленинград, 1975, էջ 14։

4 Գրիգոր Տարոնացին (898—923?) հնազանդություն է հայտնում կայսեր, իսկ 930-ական թթ. կեսերին Եղնուտը, որը, ինչպես երևում է Ծիրանածինի հաղորդումից, եղել է Տարոնի իշխանական տան ձեռքում, անցնում է կայսրությանը (Constantine Porphyrogenitus, De Administrando Imperio, ed. by Gy. Moravcsik, English transl. by R. J. H. Jenkins, Budapest, 1949, 43, 179—186, այսուհետև՝ D.A.I.)։

5 D. A. I., 44, 125—128։ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Բյուզանդական աղբյուրները», Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 13 (այսուհետև՝ Կոստանդին Ծիրանածին)։

6 D. A. I., 44, 17—19։ Կոստանդին Ծիրանածին, էջ 10։

7 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 96—97։

8 Համմ. նույն տեղում, էջ 97։

նյութում Աշոտ Բագրատունու և հայ իշխանների դեմ, սակայն հաջողության չէին հասնում։

Շուրջ 880 թ. Աշոտ Բագրատունին գնում է Ապահունիք և պաշարում Մանազկերտը։ Այդ մասին Թովմա Արծրունին գրում է. «Եւ զի էր պաշարեալ նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Աբլբասայն էր, և առեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն[10] եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն»[11]։

Այստեղ շատ կարևոր է հայ Բագրատունիների և կայսիկ ամիրայության պաշտոնական հարաբերությունների մասին եղած վկայությունը։ «Հրովարտակս ի խաղաղութիւն» իր մեջ կարող էր մեծ իմաստ պարունակել։ Ինչպես երևում է Աշոտը այդ հրովարտակով ճանաչել էր Մանազկերտին և շրջակա ամրոցներին տիրելու կայսիկների իրավունքները։ Աշոտ Բագրատունին հրովարտակ տալու իրավունք ուներ, քանի որ 863 թ. նա իշխանաց իշխան էր։ Այնպես որ մինչև պաշտոնապես թագավոր դառնալը նա շուրջ 880 թ. արդեն ճանաչել էր կայսիկների տիրակալական իրավունքները։

Ինչպես տեսնում ենք, Աշոտ Բագրատունու առաջնահերթ նպատակն էր նվաճել Մանազկերտը, սակայն այդ նրան չհաջողվեց։ Այլ պարագաներում, եթե դա սովորական արշավանք լիներ և թեկուզ միայն պատժիչ, նա անհաջողության դեպքում կհեռանար առանց պաշարվածների հետ որևէ բանակցությունների։ Սակայն այդ ժամանակ նա փաստորեն արդեն երկրի տերն էր և չհնազանդեցված կայսիկներին կենտրոնական իշխանության հանդեպ ինչ-որ ստատուս էր անհրաժեշտ տալ։ Ըստ երևույթին, Աշոտ Բագրատունին ավելի հարմար է գտնում կայսիկներին վասալական իրավունքով տիրակալ ճանաչել, քան թե իր երկրի համար շատ կարևոր ստրատեգիական դիրք գրավող Մանազկերտի հետ անընդհատ պայքարի մեջ լինել։ Այն, որ կայսիկները, որպես վասալներ, փաստորեն ծառայում էին Աշոտ I Բագրատունուն, երևում է Ծիրանածինի հետևյալ հաղորդումից. «Իշխանաց իշխան Աշոտը այս Ապելվարդին տվեց նաև Խլիատ ամրոցը, Արզեսը և Պերկրին, քանզի արևելքի բոլոր շրջանները գտնվում էին վերոհիշյալ իշխանաց իշխան Աշոտի՝ իշխանաց իշխան Սմբատի հոր ձեռքում»[12]։ Պարզ է, որ այս ամրոցները Աշոտ Բագրատունին շնորհել էր Աբու-լ-Վարդին «Հրովարտակս ի խաղաղութիւն» տալու ժամանակ կամ, որ ավելի հավանական է, դրանից հետո (այս ամրոցներից Բերկրին մենք ստորև կանդրադառնանք)։ Հավանաբար, նշված ամրոցները

---

[9] «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 218—222։

[10] Նկատի ունի Դերենիկի ձերբակալման մասին եղած լուրը։ Դերենիկը ձերբակալվել էր Վասպուրականի Սևան բերդում, Հասանիկ Արծրունու կողմից, որին այդ քայլին դրդել էր Տարոնի իշխան Բագարատ Բագրատունու որդին՝ Աշոտ Կյուրապաղատը, վերջինս իր հերթին տուժել և մինչ այդ ձերբակալվել էր նույն բերդում Դերենիկի կողմից։ Դերենիկի նպատակն էր իր փեսային՝ Աշոտ Կյուրապաղատի եղբայր Դավիթին Տարոնի իշխան դարձնել։ Դերենիկի և Աշոտ Կյուրապաղատի միջև թշնամությունը ավելի էր սրում Մանազկերտի ամիրա Աբու-լ-Վարդը։ Դերենիկի ձերբակալման լուրը ստանալով, Աշոտ իշխանաց իշխանը շտապում է օգնության հասնել իր փեսային։ Աշոտ իշխանաց իշխանի միջնորդությամբ Հասանիկը ազատ է արձակում Դերենիկին, «պատանդ թողնալ զԳագիկ որդի Դերենկին և որդի Գրիգորի Արծրունւոյ» (Թովմա Արծրունի, էջ 207, 220, 222—224)։

[11] Թովմա Արծրունի, էջ 224։

[12] D. A. I., 41, 19—23։ Կոստանդին Ծիրանածին, էջ 10։

կայսիկներին հանձնելով Աշոտ I Բագրատունին նրանց վրա էր դնում երկրի այդ մասի պաշտպանությունը[13]։ Որ կայսիկները վասալական կախվածության մեջ էին և զինվորական ծառայություն էին կատարում Աշոտ I-ի օրոք, երևում է այն բանից, որ հետագայում, Սմբատ I-ի թագավորության տարիներին, նրանք ապստամբում և հրաժարվում են այդ պարտականություններից. «Որդիքն Աբդռահմանի[14], որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին (Սմբատ I-ի— Է. Դ.), տալ հարկս և զինուորել որպէս որէն էր»[15]։

Հայաստանի տարբեր մասերում Աշոտ Բագրատունու ձեռնարկած միջոցառումները հաջողությամբ պսակվեցին, երկրում մի առ ժամանակ ստեղծվեց կայուն վիճակ, և նա Բագրատունյաց Հայաստանի թագավոր դարձավ (885/86—890 թթ.), ճանաչվելով խալիֆայության ու կայսրության կողմից[16]։

Աբու-լ-Վարդ I-ի մահից հետո «նրա տիրույթները անցան որդուն՝ Ապելխամիտին (Աբդ ալ-Համիդ— Է. Դ.), իսկ Ապելխամիտի մահից հետո վերջինս իշխանությանը տիրացավ նրա անդրանիկ որդի Ապոսևատան»[17]։ Այս անցքերը տեղի են ունեցել շատ կարճ ժամանակամիջոցում։ Սակայն պարզ է, որ Աբու-լ-Վարդը և Աբդ ալ-Համիդը եղել են Աշոտ I-ի և Սմբատ I-ի օրոք, սակայն ոչ ուշ քան վերջինիս գահակալման առաջին տասնամյակը, քանի որ X դարի սկզբին արդեն հանդես են գալիս Աբդ ալ-Համիդի որդիները, իսկ սրանց ապստամբության հետ կապված մի դրվագ բերում է Թովմա Արծրունին. «Ընդ այն ժամանակս զօրաժողով եղև թագաւորն Հայոց Սմբատ ի վերայ Ապահունեաց աշխարհին... Եւ գրէթէ ամենայն իշխանք Հայոց, Վրաց և Աղուանից եկեալ էին ընդ զօրս Հայոց ի վերայ աշխարհին Ապահունեաց... Եւ անցեալ բանակեալ էին զօրքն Հայոց ի դաշտին Օշական[18] ի Մանազաւեան նահանգին[19]։

---

[13] Արաբական արշավանքների վտանգից բացի վիճակը վատթարանում էր նաև Տարոնի և Վասպուրականի իշխանական տների միջև տեղի ունեցող հակամարտության և, հատկապես, Վասպուրականի Արծրունիների կենտրոնախույս ձգտումների հետևանքով, որոնք 908 թ. հանգեցրին Վասպուրականի թագավորության ստեղծմանը։

[14] Ինչպես ստորև Ծիրանածինի հաղորդումներից կտեսնենք, այստեղ խոսք կարող էր լինել Աբու-լ-Վարդ I-ի որդու՝ Աբդ ալ-Համիդի որդիների՝ Աբու Սևադայի, Աբու-լ-Ասվադի և Աբու Սալիմի մասին։ Թովման, Աբդ ալ-Համիդի փոխարեն նշում է Աբդ ալ-Ռահմանին, ըստ երևույթին, ոչ թե անունները շփոթելով, այլ միայն նրան իմանալով որպես Աբու-լ-Վարդ I-ի որդի, այնինչ սա պետք է նրա երկրորդ որդին լիներ, Ահմադի հայրը, որի մասին խոսում է Ծիրանածինը։ Այնպես որ Թովման ոչ թե Աբդ ալ-Համիդին է կոչում «Աբդռահմանն», այլ նա այդ երկուսից իմացել է միայն Աբդ ալ-Ռահմանին, որը թերևս միացել էր Աբդ ալ-Համիդի որդիների ապստամբությանը։ Նա, կայսիկների մոտ գոյություն ունեցող ժառանգության կարգի համաձայն, չէր հաջորդել Աբդ ալ-Համիդին, որպես կայսիկների բոլոր տիրույթների տիրակալ, քանի որ վերջինս չափահաս որդի ուներ։

[15] Թովմա Արծրունի, էջ 245։

[16] Համմ. Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 85—86։

[17] D. A. I., 44, 23—26։ Համմ. Կոստանդին Ծիրանածին, էջ 10։

[18] Օշական դաշտի տեղադրությունը Ապահունիքում տե՛ս «Тарон в древности и средние века» քարտեզում, հեղինակ Ս. Տ. Երեմյան (Ղ. Վ. Այվազյանի «История Тарона» и армянская литература IV—VII веков» (Ереван, 1976) գրքում)։

[19] Այստեղ նահանգի անունը հիշատակվում է դրա հին տերերի՝ Մանավազյան իշխանների անունով։ Սանագկերտը հիշատակվում է նաև «Մանաւազակերտ», «Մանաւազկերտ» ձևով (Մանավազյանների մասին մանրամասն տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 312 և հտ.)։

Իսկ որ տիրէր աշխարհին Ապահունեաց Կայսիկն (Աբու Սևադան— Է. Դ.)[20], զիւր զօրսն առ ինքն գումարեալ և որ շուրջ զնովաւ քաղաքայինք և ասպատակքն Պարսից, որք ի Յունացն վերայ առնէին արշաւանս»[21]։

Այժմ անդրադառնանք այն իրական դրդապատճառին, որը այսքան զորք էր հավաքել Ապահունիքում։

Ինչպես հայտնի է, Սմբատ I-ը ստիպված էր իր գահակալման առաջին տարվանից մեծագույնս հաշվի առնել երկու հարևաններին՝ Բյուզանդիային և Արաբական խալիֆայությանը։ Նա այդ հարցում հետևում էր իր հոր՝ Աշոտ I-ի քաղաքականությանը, որը բխում էր օբյեկտիվ իրականությունից։ Սմբատ I-ը Ատրպատականի ոստիկան Ափշինի միջոցով խալիֆից թագ ստացավ։ Նա, շարունակելով իր հոր արտաքին քաղաքականությունը, Բյուզանդիայի կայսր Լևոն VI-ի (886—912) հետ մտերիմ հարաբերությունների մեջ է մտնում[22]։ Այդ ամենևին դուր չի գալիս Ափշինին, բայց Սմբատին հաջողվում է կասեցնել նրա արշավանքը բանակցությունների և նվերների միջոցով[23]։

Ի ապացույց հայ-բյուզանդական դաշինքի խոսում են նաև հետևյալ անցքերը։ Սմբատ I-ը, Ատրպատականի սահմաններից վերադառնալիս, Դվինի դռները փակ է տեսնում և պաշարում է այն։ Երկարատև պայքարից հետո նրան հաջողվում է վերցնել Դվինը, իսկ «զլխաւոր ոստիկանք և հրամանատարք քաղաքին՝ եղբարք երկու, որոց անուանք Մահմէտ և Ումայի՝ արտաքս ելեալ զիշերի փախստեալք լինէին. զոր և զգացեալ և զհետ կրթեալ զօրացն և ձերբակալ արարեալ՝ ածեն արքային։ Եւ նորա տոռամբք կապանաց և վարոցօք զնոսա տանջեալ և առեալ ի նոցանէ բազում գանձս ոսկոյ և արծաթոյ՝ առ կայսր Լևոն երկաթի շղթայիւքն զնոսա առաքէ»[24]։

Այսպիսով, մինչև 893 թ., այսինքն իր գահակալության երրորդ տարին, Սմբատ I-ը կարողացավ Բյուզանդիայի և խալիֆայության միջև իր թագավորությունը պահպանել ու նորից ճանաչվել, բայց և «վաստակեց» Ատրպատականի ամիրայի՝ Ափշինի, իսկ հետագայում նաև նրա հետնորդի՝ Յուսուֆի թշնամությունը, որոնք պատեհ առիթը չէին կորցնելու Սմբատին կործանելու համար։

Դեպի Կարինի շրջանը բյուզանդական զորքի 895 թ. արշավանքը արաբների կողմից կարող էր դիտվել որպես գործնական քայլ հայ-բյուզանդական դաշինքի ասպարեզում։ Այդ արշավանքի մասին հաղորդում է Թովմա Արծրունին. «Յետ այսր (այսինքն Դվինի 893 թ. երկրաշարժից[25] հետո)՝ յերկրորդ ամի պաշարեն զԿարնային քաղաքն զօրքն Յունաց. և դարձեալ անդրէն ի

---

20 Քանի որ սա էր եղբայրներից ավագը, ուրեմն կայսիկների կենտրոնական իշխանությունը սրա ձեռքում էր, իսկ մնացած եղբայրները պետք է տիրեին մյուս ամրոցներին (հմմտ. Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 120—121)։

21 Թովմա Արծրունի, էջ 245—246։

22 «Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 158։

23 Նույն տեղում, էջ 159—160։

24 Նույն տեղում, էջ 160—161։ Հմմտ. Ասողիկ, էջ 161։

25 Տե՛ս նաև՝ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 162։ Ինչպես հաղորդում է Դրասխանակերտցին, երկրաշարժից հետո Ափշինը ներխուժում է Հայաստան, սակայն Դողսի մոտ պարտվում է (էջ 166—169)։

Լամս իւրեանց Թողեալ գնացին»[26]։ Այլ հանգամանքների հետ մեկտեղ[27], ըստ երևույթին, հայ-բյուզանդական դաշինքի այս նոր դրսևորումը ավելի է բորբոքում Ափշինին և նա, երկրաշարժից հետո, Ուտիքի, Վիրքի, Գուգարքի վրայով երկրորդ անգամ գալով Հայաստան (մոտ 896 թ.), նվաճում է Կարս ամրոցը[28]։ Այս մասին Ասողիկը գրում է. «Ամիրայն Ափշին որդի Սաճին, որ էր ոստիկան ի Պարսս (նկատի ունի Ատրպատականը— Է. Դ.), որ և պսակեաց զՍմբատ, մանաւանդ զչարեալ ընդ բարեկամանալն Սմբատայ Յունաց կայսերն՝ և ելեալ Ափշին յաշխարհս Հայոց՝ առնու զբերդն Կարուց, զերի վարեալ զազատս կանամբք և մանկամբք իւրեանց և ողորմելի տեսակաւ հասուցանել ի քաղաքն Դուին»[29]։ Սմբատը ստիպված էր ծանր պայմաններով հաշտություն խնդրել[30]։

Հայ-բյուզանդական դաշինքը, անկախ կողմերի նպատակներից, արդեն ակներև փաստ էր, որին ապացույց պետք է լիներ նաև 901 թ. պատրիկ Լալակոնի և 902 թ. սխոլերի զոմեստիկոս մագիստրոս Կատակալոնի[31] արշավանքները դեպի Կարին և Բասեն։ Ինչպես Հայաստանում գտնվող արաբական տարրը, այնպես էլ դրսի հովանավորողները խիստ անհանգստացած էին X դարի սկզբին Բյուզանդիայի և Հայաստանի միջև արդեն բավականին գործուն դարձած այդ դաշինքի հետևանքներից։ Ամենայն հավանականությամբ, այդ դաշինքը պակաս դեր չէր խաղացել նաև Ապահունիքում Սմբատ I-ի գլխավորությամբ հայ-վրացա-աղվանական զորքի գումարման գործում։ Իսկ արդեն պարզ է, թե ինչու էին հենց այդ ժամանակ արաբները «ի Յունացն վերայ առնէին արշաւանս»։ Դա 902 թ. էր, երբ Կատակալոնի զորքը խոշոր արշավանք էր ձեռնարկել Կարինի և Բասենի վրա։ Հենց այդ նույն ժամանակ էր գումարվել հայ-վրացա-աղվանական զորքը։ Բյուզանդացիները և նրանց դաշնակից հայերը, ըստ երևույթին, գիտեին, որ Բասենի ու Կարինի և, հատկապես, վերջինի պաշտպանության համար արաբները զորք կբերեն կայսիկների տիրույթի վրայով, որի կենտրոնը Մանազկերտն էր, ուստի ըստ նախօրոք մշակված ծրագրի և պայմանավորվածության Սմբատ I-ի գլխավորած հայ-վրացա-աղվանական զորքը կտրում է արաբական միացյալ զորքի ճանապարհը։

Անհրաժեշտ է նշել, որ Ա. Տեր-Ղևոնդյանը, որը նույնպես անդրադարձել է արաբական միացյալ զորքի մասին եղած հաղորդմանը, ճիշտ է այն հարցում, որ կայսիկները ապստամբեցին Սմբատի համար խառը ժամանակամիջոցում[32]. Սմբատի արշավանքը (895 թ.) Ահմադ Շայբանիի դեմ անհաջող էր[33]։ Դրան

---

26 Թովմա Արծրունի, էջ 231։

27 Դրանցից էին՝ մինչև երկրաշարժը Դվինի գրավումը, Սմբատ I-ի ընդհարումը Շայբանի Ահմադի հետ (Ասողիկ, էջ 161։ Հմմտ. Թովմա Արծրունի, էջ 236—237։ Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 116—120)։

28 Դրասխանակերտցի, էջ 177—178։

29 Ասողիկ, էջ 161։

30 Ըստ այդ պայմանների պատանդ էին թողնվում Սմբատի և նրա եղբոր՝ Սահակի ավագ որդիները (Թագաժառանգ Աշոտը և նրա հորեղբորորդի Սմբատը), իսկ Թագավորի կրտսեր եղբոր՝ Շապուհի աղջիկը կնության էր տրվում Ափշինին (Դրասխանակերտցի, էջ 178—181։ Թովմա Արծրունի, էջ 241)։

31 D. A. I., 45, 50—55։ Կոստանդին Ծիրանածին, էջ 15։

32 Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 121—122։

33 Թովմա Արծրունի, էջ 236—238։ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 173—176։ Ասողիկ, էջ 161։ Ի դեպ, Սմբատի հսկայական զորքով կատարած այս արշա-

հաջորդել էր Ափշինի հարձակումը, որի մասին վերը հիշեցինք։ Պետք է նշել, որ այդ անցքերից մի քանի տարի էր անցել, երբ Սմբատը արշավեց իր հզոր բանակով։ Ուրեմն այդ արշավանքը ուղղված էր ոչ միայն ապստամբների դեմ։ Կարծում ենք, որ Սմբատ I Բագրատունին նախապես գիտեր Ապահունիքում միացյալ արաբական զորքերի հավաքման մասին։ Դրանով իսկ Սմբատի միացյալ զորքը գործում էր հայ-բյուզանդական դաշինքի շրջանակներում նախօրոք մշակված ծրագրի համաձայն։ Սրանով ապահովվում էր Կատակալոնի արշավանքը, որը, որքան կարելի է դատել Կոստանդին Ծիրանածինի հաղորդումից, հաջող էր. «(Կատակալոնը— է. Դ.) գալով Թեոդոսուպոլսի ամրոցը (ἐν τῷ κάστρῳ Θεοδοσιουπόλεως — է. Դ.), ավարի առավ նրա շրջակայքը, ապա նաև նույն ձևով ավերելով Ֆասիանև երկիրը և նրա ամրոցները, վերադարձավ՝ սարակինոսներին մեծ վնաս հասցնելով»[34]։ Այստեղից երևում է, որ բյուզանդացիները մի որոշ ժամանակ տիրեցին Թեոդոսուպոլսին[35]։ Սմբատ I-ի արշավանքը, որով փակվեց Կարինի արաբներին օգնության շտապող արաբական միացյալ զորքի ճանապարհը, խոշոր նշանակություն ունեցավ բյուզանդացիների համար։

Արաբական զորքը ծանր պարտության մատնվելով փակվեց Մանազկերտում։ Թովմա Արծրունին գրում է. «Իսկ որք էին արգելեալք ի քաղաքն՝ աղօթականս և պաղատանս առ մեծ իշխանն Աշոտ յղէին, զի համոզեսցէ ի մէջ նոցա զխաղաղութիւն. զոր ոչ անփոյթ արարեալ լի բարեմտութեամբ յղփացեալն Աշոտ՝ խօսի ընդ թագաւորին զխաղաղութիւն. զոր ոչ անունկնդիր լեալ ընդունի զհայցելին, առնլով հարկս և պատանդս, և զբերդն Երիկաւ Հաղացովտի (Ագիովտի—է. Դ.), զոր հանեալ էր մանազաւեցոյն ի բերկրացոյն. նոցա հանեալ էր ի Գինունի ազգէն, ի զարմէ Մեժեժի Գնունոյ, ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի. և դարձուցանէ անդէն առ բերկրացիսն, և ինքեանք դառնային մեծաւ յաղթութեամբ անպայման խնդութեամբ։ Գործեցաւ այս ՅԾԱ թուականութեանս Հայոց և ի Դ ամի հայրապետութեանն Յօհաննու Հայոց կաթողիկոսի»[36]։ Այս հատվածը մանրամասն քննության է առել Ա. Տեր-Ղևոնդյանը[37]։ Այստեղ կցանկանայինք նշել հետևյալը. կարելի է ենթադրել, որ Երիկավ ամրոցն իր շրջակայքով (այսինքն Բերկրիի շրջակա տարածքի մի մասը) նվաճվել էր կայսրիկների կողմից դեռևս Աբու-լ-Վարդ I-ի ժամանակ, այն բանից հետո, երբ, ըստ Ծիրանածինի, Աշոտը նրան էր հանձնել Խլաթը և Արճեշը։ Իսկ Բերկրիի մասին հաղորդման մեջ արտացոլվել է այն իրողությունը, որ Բերկրիի շրջանում գտնվող Երիկավի բերդը անցել էր կայսրիկներին։ Ծիրանածինը, հավանաբար, փաստ է ունեցել այն մասին, որ Բերկրիին պատկանող շրջանի մի մասը եղել է կայսրիկների ձեռքում և Ծիրանածինի չափազանցությունը ավյալ դեպքում նրանում է, որ այդ մի մասը ներկայացրել է որպես Բերկրիի ամբողջ տարածքը և այն էլ տրված Աշոտ I-ի կողմից։ Ուրեմն Բերկրիի մասին Ծիրանածինի հաղորդումը որոշ

վանքը իրերի բերումով նույնպես համընկնում է դեպի Կարին բյուզանդացիների կատարած արշավանքի հետ։

34 D. A. I., 45, 50—55։ Կոստանդին Ծիրանածին, էջ 15։

35 Հմմտ. „The Cambridge Medieval History", vol. IV, p. I, Cambridge, 1966, էջ 715։

36 Թովմա Արծրունի, էջ 246—247։ Նշված թվականները համապատասխանում են 902 թ.։

37 Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 122, 146։

չափով համապատասխանում է իրականությանը և ամենևին անհրաժեշտություն չկա դրանում միտումնավոր հավելագրում տեսնել։

Սմբատ I-ը և նրա զորավարները պարտության մատնեցին միացյալ արաբական զորքը և հնազանդության բերին կայսիկներին։ Ամենայն հավանականությամբ, Սմբատը ոչ միայն ետ էր վերցրել և ութմանիկներին հանձնել Երիկավ բերդը, այլև կայսիկներին զրկել էր Խլաթից և Արճեշից, քանի որ հետագայում, «երբ պարսից ամիրա Ապոսատայը (Ἀποσάτας — Յուսուփը— Է. Դ.) գերի վերցրեց և գլխատեց Մեծ Հայքի իշխանաց իշխան Սմբատին, Մանցիկերտ ամրոցում նստող Ապոսատան գրավեց Խալիատ ամրոցը, Պերկրի ամրոցը և Արզես քաղաքը»[38]։ Պատահական չպետք է լինի, որ Աբու Սևադայի երկու եղբայրները և դրանցից Աբու-լ-Ասվադի [հոր]եղբորորդի և որդեգիր Ահմադը Ծիրանածինի կողմից հիշատակվում են Սմբատ I-ի եղերական մահից (914) հետո։ Դրա պատճառն այն էր, որ եղբայրները, Աբու Սևադայի հետ (902 թ. դեպքերը ցույց տվեցին, որ նրանք անհաջողության էին մատնվել) մասնակցելով կայսիկների տիրույթների ընդլայնման նպատակով կատարվող արշավանքներին, իրենց հերթին տիրացան որոշ տարածքների. «Ապոսատայի երկրորդ եղբայրը՝ Ապոլեսֆուետը, և նրա [հոր]եղբորորդի և որդեգիր Ախմետը (Ահմադ— Է. Դ.) գրավեցին Խալիատ ամրոցը, Արզես ամրոցը և Ալցիկն ամրոցը... Ապոսատայի և Ապոլեսֆուետի երրորդ եղբայրը՝ Ապոսելմիսը տիրում էր Ցերմանցու ամրոցին (Ζερμανζοῦ — պետք է համապատասխանի Խնուսին, որը Սերմանց լեռան ստորոտում էր— Է. Դ.) և նրա շրջակայքին...»[39]։

Ինչպես տեսնում ենք, Ապահունիքը Մանազկերտով և Բերկրին մնում են Աբու Սևադայի ձեռքում։ Անհրաժեշտ է նշել, որ թեև, ըստ Ծիրանածինի, կայսիկների ակտիվացումը անմիջապես հաջորդում է Սմբատի մահվանը, սակայն պետք է ենթադրել, որ այդ տեղի էր ունեցել քիչ ավելի շուտ, քանի որ Սմբատը, Յուսուփի 903—910 թթ. արշավանքներից և 908 թ. Վասպուրականում Գագիկ Արծրունու թագավոր դառնալուց հետո, կորցրել էր իշխանությունը հարավային շրջանների վրա[40] և Ծիրանածինի հաղորդումները պետք է վերաբերեն հենց սրանից հետո ընկած ժամանակաշրջանին։

Այս աղետալի ժամանակ հայ-բյուզանդական դաշինքի շրջանակներում կարծես թե օգնության փորձեր են արվում. «Արքայն Հոռոմոց Բարսեղ[41] իբրև լուաւ զայս ոճիրս չարի զմէօք մածեալ՝ բազում զօրու հորդան տուեալ դալ յօգնականութիւն Սմբատայ՝ յանկարծակի ժամանեալ նմա ելք հասարակաց կենաց մարդկան և վախճանեալ, թագաւորէ ընդ նորա եղբայր նորուն Աղէքսանդր։ Եւ ապա շփոթ աղմկի զնովաւ շուրջ պատեալ յապստամբողաց արանց՝ և նա ևս ոչ կարաց ժամանել յօգնականութիւն»[42]։

Այսպիսով, Յուսուփի արշավանքով ոգեշնչված կայսիկները կարող էին

---

[38] D. A. I., 44, 50—54։ Կոստանդին Ծիրանածին, էջ 11։

[39] D. A. I., 44, 55—57, 61—62։ Կոստանդին Ծիրանածին, էջ 11։

[40] Այս ժամանակ պետք է վերանային ութմանիկները (հմմտ. M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides de Jazirah et de Syrie, Alger, 1951, էջ 473, տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Նշվ. աշխ., էջ 146)։

[41] Ս. Մարտենը և Ա. Վասիլևը ճիշտ են նկատել, որ այստեղ Բարսեղ անվան փոխարեն պետք է Լևոն լիներ (А. А. Васильев, Византия и арабы, С. Петербург, 1902, էջ 102, ծան. 2)։

[42] Դասխանակերտցի, էջ 233։

ակտիվացած լինել 908 թ.։ Հայաստանի համար այդ իսարդ ժամանակաշրջանում նրանք աստիճանաբար տիրույթների տեր ու անօրեն էին դարձել ու անվտանգել, ինչպես երևում է Ծիրանածինի հաղորդումից. «Իշխանաց իշխան Սմբատի Պարսկաստանի (իմա՝ Ատրպատականի— է. Դ.) ամիրայի կողմից սպանվելուց հետո [Ապոսևատան] իրեն համարեց Մանցիկերտ ամրոցի և մյուս ամրոցների ու շրջանների տերն ու տիրականը և անկախացավ»[43]։ Կայսրիկների անկախացման մասին եղած փաստը Հայաստանի համար այդ ծանր վիճակի առավել պերճախոս վկայությունն է։

Աշոտ II-ը իր գահակալության առաջին օրվանից շատ բարդ խնդիրների առջև էր կանգնել։ Երկիրը մասնատված էր, և դա ոչ միայն ֆեոդալական ժամանակաշրջանին հատուկ հողատիրության ձևի, այլև երկրի ներսում արաբական ամիրայությունների գործունեության հետևանք էր[44]։ Այդ ուղղությամբ բուռն գործունեություն էր ծավալել Ատրպատականի Յուսուֆը, որը Աշոտ Շապուհյանի գլխին Դվինում թագ դնելով այնպիսի վիճակ ստեղծեց, որ Հայաստանում Աշոտ II-ի և Գագիկ Արծրունու կողքին հանդես եկավ նաև երրորդ թագակիրը։ Պարզ է, որ երկրի կենտրոնական իշխանության համար այսպիսի ծանր պահին կայսրիկների համար բարենպաստ պայմաններ էին ստեղծվել իրենց անկախ զգալու։ Սակայն կայսրիկների անկախ վիճակը երկար չի տևում։

Աշոտ II-ի թագավորության սկզբնական շրջանում հայ-բյուզանդական դաշինքը նոր փուլ է թևակոխում։ Գահակալության սկզբի տարիներին այնպիսի վիճակ էր ստեղծվել, որ Աշոտ II-ը Բյուզանդիայի օգնության կարիքն ուներ, իսկ Բյուզանդիային սեփական շահերը մղում էին Արևելք։ Ստեղծված պայմաններում բնական ելքը եղավ այն, որ Աշոտ II-ը, գալով Կոստանդնուպոլիս, վերադարձավ բյուզանդական օժանդակ զորքով[45]։

Բյուզանդական զորքի հաջորդ տարիների (922 և 927 թթ.) արշավանքները, զորավար Հովհաննես Կուրկուասի գլխավորությամբ, տեղի ունեցան Դվինի ուղղությամբ, իսկ 924 թ. նրա եղբայրը՝ Թեոփիլոսը արշավեց Բասենի վրա։ Ռոմանոս I-ի (920—944) օրոք Բյուզանդիան ուժեղացնում է իր ճնշումը արաբների վրա, արդեն իսկ հաշվի չնստելով իր նախկին դաշնակից Հայաստանի հետ։ Ի դեպ, 922 թ. բյուզանդացիների դեմ կռվում էր Աշոտ II-ը, որը արաբների հետ պաշարվել էր Դվինում[46]։ Հաջորդ երկու տասնամյակներում կայսրությունը մեծ հաջողությունների է հասնում Մելիտինեի, Սամոսատի, Կարինի ուղղություններով։

931 թ. կայսրիկների դեմ Հովհաննես Կուրկուասի ձեռնարկած արշավանքը ավերիչ բնույթ է ունենում[47]։ Ծիրանածինի մի հաղորդումից հետևում է, որ Հովհաննես Կուրկուասի արշավանքներից հետո կայսրիկները հարկատու էին դարձել կայսրությանը։ Նա գրում է. «Իր մյուս երկու եղբայրներ Ապոլեսֆուեռի և Ապոսելմիսի հետ (Աբու Սևադան— է. Դ.) [ստիպված եղավ] ենթարկվել կայսեր (քանզի սխոլերի դոմեստիկոսը համառ պայքար էր մղել ամրոց-

[43] D. A. I., 44, 26—29։ Կոստանդին Ծիրանածին, էջ 10։

[44] Ա. Տեր-Ղևոնդյան, Նշվ. աշխ., էջ 126—127։

[45] Դրասխանակերտցի, էջ 292—293։

[46] Ասողիկ, էջ 170։

[47] Ibn al-Athir, VIII, 173. Այս հաջողությունը հաջորդել էր Ատրպատականի կառավարիչ Մուֆլիհից կրած պարտությանը (նույն տեղում, էջ 159։ Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Նշվ. աշխ., էջ 148)։

ների դեմ, ասպատակել ու ավերել նրանց պատկանող շրջանները), հռոմայեցիների կայսեր վճարելով իրենց ամրոցների և շրջանների համար նաև հարկ»[48]։ Նույն գլխում Միրանածինը մի քանի անգամ ևս շեշտում է, որ Բյուզանդիան հպատակեցրել էր կայսիկներին։

Անհամապատասխանություն է նկատվում կայսիկների վերաբերյալ Միրանածինի հաղորդման մեջ. «Մանցիկերտ ամրոցը, Ապահունի երկիրը, Կորին և Խարկան (Հարքը— Է. Դ.) ևս գտնվում էին իշխանաց իշխանի գերիշխանության և տիրապետության ներքո, մինչև այն ժամանակ, երբ Մանցիկերտի ամիրա Ապոսևատան իր երկու եղբայրներ Ապոլեսֆուետի և Ապոսելմիսի հետ հպատակություն հայտնեցին կայսեր, իրենց ամրոցների և շրջանների համար նրան վճարելով հարկ»[49]։

Ըստ Միրանածինի կայսիկները «իշխանաց իշխանի» (հայոց թագավորի) գերիշխանության և տիրապետության ներքո էին մինչև կայսրին հպատակություն հայտնելը։ Անհամապատասխանությունը այստեղ է, քանի որ վերևում նա գրում էր, թե Սմբատ I-ի սպանությունից հետո կայսիկները անկախացան մինչև Դոմեստիկոսի արշավանքները և կայսրին հպատակվելը։ Հենց այստեղ է պարզվում դրա իսկական պատճառը։ «Իմ վասալի վասալը իմ վասալն է» թեզը հաստատելու համար Միրանածինը ոչ թե Բերկրիի նկատմամբ իրավունքներ է վերագրում կայսիկներին, ինչպես ընդունված է համարել (վերը տեսանք, որ նա հիմքեր ուներ Բերկրին կայսիկներինը համարելու), այլ անմիջական կապ է ստեղծում Բագրատունյաց Հայաստանին և Բյուզանդիային կայսիկների հպատակվելու միջև։

Միրանածինի հաղորդումներից երևում է, որ սխոլերի դոմեստիկոս Հովհաննես Կուրկուասի արշավանքների ժամանակ, երբ կայսիկները հպատակվեցին, երեք կայսիկ եղբայրները դեռևս կենդանի էին, որոնցից գլխավորը Աբու Սևադան էր։

Ժառանգության հարցում առաջնությունը պատկանում էր Աբու Սևադայի ընտանիքին, քանի որ նա էր Աբու-լ-Վարդ I-ի թոռը և Աբդ ալ-Համիդի ավագ որդին։ «Ապոսևատայի մահից հետո,— գրում է Միրանածինը,— Մանցիկերտը և նրա շրջաններն ու ամբողջ տիրապետությունն անցավ Ապոսևատայի որդի Արդեռախիմի ձեռքը»[50]։ Աբդ ալ-Ռահիմի[51] մահից հետո Մանազկերտ ամրոցին և վերոհիշյալ բոլոր շրջաններին տիրացավ նրա հորեղբայրը՝ Աբու-լ-Ասվադը, որը Աբդ ալ-Համիդի միջնեկ որդին էր[52]։ Նրա մահից հետո Մանազկերտին և վերոհիշյալ բոլոր շրջաններին տիրացավ Աբու Սևադայի և Աբու-լ-Ասվադի երրորդ եղբայրը՝ Աբու Սալիմը[53]։ «...Իսկ վերոհիշյալ

---

[48] D. A. I., 44, 40—45։ Կոստանդին Միրանածին. էջ 10—11։

[49] Մինչ այդ Միրանածինը նշում է. «Այս երեք ամրոցները (Խլաթը, Արճեշը, Բերկրին— Է. Դ.) վերոհիշյալ իշխանաց իշխան Աշոտի Սմբատի հոր, երկրորդ Աշոտի և մագիստրոս Ապասակի պապի ժամանակներից սկսյալ մինչև երկրորդ Աշոտի՝ իշխանաց իշխանի ժամանակ գտնվում էին իշխանաց իշխանի գերիշխանության ներքո, և հարկ էին վճարում նրան» (D. A. I., 44, 34—39։ Կոստանդին Միրանածին, էջ 11)։ Այսինքն դրանից հետո մի առ ժամանակ, նրանք անկախացան, ինչպես հետևում է վերը նշվածից։

[50] D. A. I., 44, 66—68։ Կոստանդին Միրանածին, էջ 11։

[51] Աբդ ալ-Ռահիմը անժառանգ է մահանում, իսկ նրա Ապելմուգեն անունով եղբայրը անչափահաս էր (D. A. I., 44, 90—91, 96—97)։

[52] Ինչպես վերը տեսանք, Աբու-լ-Ասվադը և նրա [հորեղբորորդի և որդեգիր Ահմադը տիրում էին Խլաթին, Արճեշին և Արծկեին։

[53] Աբու Սալիմը, ինչպես վերը տեսանք, տիրում էր Հարքից հյուսիս-արևմուտք ընկած

Ախամետը, այն է Ապոլեսֆուետի [հոր]եղբորորդին և որդեգիրը, Ապոլեսֆուետի գիտությամբ և համաձայնությամբ տիրում է Խլիաթին, Արզեսին և Պերկրիին, որովհետև Ապոլեսֆուետը, ինչպես ասվեց, որդի չուներ, և այս Ախամետին, իր եղբորորդուն և որդեգրին նշանակել էր իր ամբողջ կարողության, ամրոցների ու շրջանների ժառանգորդ»[54]։

Պարզ երևում է կայսիկների մոտ ժառանգության հաջորդականության կարգը։ Այսպես, Աբու-լ-Վարդ I-ին ժառանգում է ավագ որդին՝ Աբդ ալ-Համիդը։ Քանի որ վերջինս չափահաս որդի (Աբու Սևադա) ուներ, ուստի և կայսիկների մոտ գոյություն ունեցող ժառանգության կարգի համաձայն նրան ժառանգեց Աբու Սևադան, այլ ոչ թե իր եղբայրը՝ Աբդ ալ-Ռահմանը։ Նույն կարգով Աբու Սևադային ժառանգում է որդին՝ Աբդ ալ-Ռահիմը և քանի որ սրա եղբայրը՝ Ապելմուզեն անչափահաս էր, Աբդ ալ-Ռահիմի մահից հետո կայսիկների տիրույթները անցնում են Աբու-լ-Ասվադին՝ Աբդ ալ-Համիդի միջնեկ որդուն, որը մինչ այդ Ահմադի հետ տիրում էր միայն նշված ամրոցների շրջանին։ Աբու-լ-Ասվադին հաջորդում է կրտսեր եղբայրը՝ Աբու-սալիմը։ Պարզ է, որ Ահմադին էր մնում այն տարածքը, որը նա Աբու-լ-Ասվադի հետ միասին գրավել էր դեռևս Աբու Սևադայի կենդանության ժամանակ։ Այսինքն, ըստ ժառանգման ավագության կարգի Աբու-լ-Ասվադի տիրույթը ավագ եղբոր կենդանության օրոք հանդիսանում էր Խլաթ, Արճեշ և Արծկե ամրոցների, ինչպես և նորից նվաճված Բերկրիի շրջանը, որի վրա և Աբու-լ-Ասվադը տիրակալ է նշանակում Ահմադին։ Հետևաբար բնական է, որ Աբու Սալիմին պետք է ժառանգեր նրա որդին, որի մասին Ծիրանածին գրում է. «Ապոսելմեսի մահից հետո Մանցիկերտ ամրոցին և նրա շրջակայքին տիրացավ նրա որդի Ապելվարդը։ Իսկ Ախամետը տիրացավ Խլիատ, Արզես և Ալցիկե ամրոցներին»[55]։ Ծիրանածինը դարձյալ մեկ անգամ նշում է. «Ախամետը ևս կայսեր ծառան էր, ինչպես և վերևում ասվեց և նա հարկ էր վճարում [կայսեր]...»[56]։

Ինչպես տեսնում ենք, համարյա մինչև 940-ական թթ. կայսիկները այսպես թե այնպես կատարել են որոշ պարտավորություններ կայսրության հանդեպ։ Աբու-լ-Վարդ II-ի հանդես գալուց հետո այդ վիճակը կտրականապես փոխվում է։ Ծիրանածինը գրում է. «Ապելվարդը նենգությամբ և խաբեությամբ սպանեց նրան (Ահմադին— է. Դ.) ու խլեց նրա երեք ամրոցները՝ Խլիատը, Արզեսը և Ալցիկեն»[57]։ Աբու-լ-Վարդ II-ը բռնի ուժով տիրացավ Ահմադի իշխանության տակ գտնվող բերդերին բավական խառն իրադարձությունների ժամանակաշրջանում։ Դրան նախորդել էին 939 և 940 թթ. համդանյան Սայֆ ալ-Դաուլայի արշավանքները Հայաստանի արևմտյան շրջանների վրա[58], որոնց ընթացքում նրան հաջողվեց որոշ նվաճումներ կատարել, ինչպես նաև կախվածության մեջ գցել մի շարք տեղական իշխան-

---

շրջանին՝ Սերմանց լեռից (Տերատշոն) արևելք ընկած շրջակա տարածքին (հմմտ. J. Markwart, Südarmenien und Tigrisquellen, Wien, 1930, էջ 305)։

54 D. A. I., 44, 100—105։ Կոստանդին Ծիրանածին, էջ 12։

55 D. A. I., 44, 106—109։ Կոստանդին Ծիրանածին, էջ 12։

56 D. A. I., 44, 110—111։ Կոստանդին Ծիրանածին, էջ 12։

57 D. A. I., 44, 112—114։ Կոստանդին Ծիրանածին, էջ 12—13։

58 А. Васильев, նշվ. աշխ., Приложение, էջ 83, Ибн-Зафир, fol. 2v։ Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 151—152։

ների ու ամիրաների և դրանով էր հիմնականում պայմանավորված 940 թ. Կողոնիայի վրա կատարված արշավանքի սրընթացությունը։ Սայֆ-ալ-Դաուլայի Հայաստանում եղած ժամանակ խնդրո առարկա հարցի առնչությամբ մեզ հետաքրքրում է Իբն-ալ-Ազրակի հաղորդման հետևյալ հատվածը. «Եվ կանչեց (Սայֆ-ալ-Դաուլան— Է. Դ.) Ահմադ իբն Աբդ ալ-Ռահման Աբու-լ-Մուիզզին՝ Խիլաթի, Դատ ալ-Ջաուզի (Արծկե), Արջիշի (Արճեշ) և Բարքարիի (Բերկրի) տիրոջը, Աբդ ալ- Համիդին՝ Մանազջիրդի (Մանազկերտ) և Դաշտ ալ-Ուարքի ու ալ-Հարքի տիրոջը... Ահմադ իբն Աբդ ալ-Ռահմանից առավ Բաղլիսը (Բաղեշ) շրջակայքով...»[59]։ 940 թ. կենդանի էին մնացել վերոհիշյալ Ահմադը, որը ընդարձակել էր իր տիրությունը և նույնիսկ տիրում էր Բաղեշին[60], իսկ կայսիկ եղբայրներից միայն Աբու Սալիմ իբն Աբդ ալ-Համիդը[61]։ Հաղորդումներից երևում է, որ Ահմադի իշխանության տակ էր գտնվում նաև Բերկրին։ Թեև Համդանյանները այլ իշխանությունների տարածքների հետ միասին ստացան նաև մի ամրոց կայսիկներից՝ Բաղեշը, այնուամենայնիվ, տվյալ ժամանակաշրջանում Համդանյանների՝ ձեռնարկումները կայսիկների համար որոշ առումով նպատակահարմար էին, քանի որ Հայաստանում գտնվող արաբների դիրքերը ամրապնդվում էին։ Պետք է նշել, որ եթե Սայֆ ալ-Դաուլայի 939—940 թթ. արշավանքների օրոք Ահմադը կենդանի էր, ուրեմն նա Աբու-լ-Վարդ II-ի կողմից պետք է սպանված լիներ 940 թ. հետո։ Իսկ Ծիրանածինից իմացանք, որ Ահմադը կայսրության հարկատուն էր։ Այսպիսով, ըստ Ծիրանածինի, կայսիկները կայսրությանը հնազանդվել էին Կուրկուասի 920-ական և Սայֆ-ալ-Դաուլայի 939—940-ական թթ. արշավանքների միջև ընկած ժամանակաշրջանում։ Վերջին արշավանքներից հետո Ահմադը, բնական է, որ պետք է դուրս եկած լիներ կայսրության գերիշխանությունից. սակայն Ծիրանածինը նրա կախվածությունը հասցնում է մինչև սպանվելը։ Նույնիսկ կարելի է ասել, որ կայսրությունն ընդհանրապես, ինչ-որ մի ամբողջական ժամանակահատվածում իր գերիշխանությունը չի տարածել կայսիկների վրա, այլ այն կրել է էպիզոդիկ բնույթ, անմիջականորեն կապված լինելով Կուրկուասի արշավանքների հետ։ Իսկ ի ապացույց կայսրության քաղաքական դոկտրինայի Ծիրանածինը այնպես է ներկայացնում, թե կայսիկները առնվազն երկու տասնամյակ եղել են կայսրության գերիշխանության տակ։ Մինչդեռ կայսիկները, ըստ երևույթին, Հովհաննես Կուրկուասի ամեն մի արշավանքից (927, 931) հետո միայն որոշ ժամանակ են հարկ վճարել կայսրությանը։ Այլ կերպ չի կարելի բացատրել նրանց դեմ Բյուզանդիայի կողմից ձեռնարկված մի քանի արշավանքները։

942 թ. Հովհաննես Կուրկուասը գալիս է Հայաստանի հարավային շրջանները[62]։ Նրա արշավանքը 942 թ. դեպի հյուսիսային Միջագետք պետք է ըն-

---

59 Նույն տեղում, էջ 152—153։

60 J. Markwart, Նշվ. աշխ., էջ 456։

61 Առաջարկված է տեքստում Աբդ ալ-Համիդի անվան առջև ավելացնել «Իբն», այսինքն դարձնել՝ որդի Աբդ ալ-Համիդի (M. Canard, Les Hamdanides et l'Arménie, Annales de l'Inst. d'études Orient, Alger, 1948, VII, էջ 88. Ա. Տեր-Ղևոնդյան, Նշվ. աշխ., էջ 154). հմմտ. Constantine Porphyrogenitus, De Administrando Imperio, ed. by R. J. H. Jenkins, vol. 2. London, 1962, էջ 169։

62 Ա. Վասիլևը գրում է, որ նա գրավեց Վանի հյուսիսային ափին գտնվող Արզան քաղաքը և ապա հույները ռազմական գործողությունները տեղափոխեցին Վերին Միջագետք (Նշվ. աշխ., էջ 250)։ Ակնհայտ է, որ խոսքը Աղձնիքի Արզանի մասին է։ Ա. Վասիլևը այս Արզանը շփո-

թացած լիներ Մելիտինե—Արածանիի հովիտ—Ջորա պահակ—Բաղեշ—Արոան—Նփրկերտ (Մայաֆարկին)—Դիարբեքիր—Մծբին—Եդեսիա (պաշարում է)—Ռաշ-Այն գծով, իսկ վերադարձը՝ հյուսիսային Ասորիքով[63]։

Հաջորդ տարիների դեպքերը ցույց են տալիս, որ Համդանյանները այլևս ժամանակ չունեցան զբաղվելու Հայաստանում, Աղձնիքից հյուսիս, 939—940 թթ. նվաճված տարածքով։ Այնպես որ իրենց հերթին, կայսրիկները ինչ-որ չափով անկախացել էին։ Վիճակը նրանց համար առավել ևս նպաստավոր էր, քանի որ 940-ական թթ. կեսերից (Ռոմանոս I-ի մահից հետո) Բյուզանդիայի ուշադրությունը մի առ ժամանակ այդ մասերից շեղվել էր։ Ըստ երևույթին, այս ժամանակահատվածում է, որ Աբու-լ-Վարդ II-ը սպանեց Ահմադին և միանձնյա տեր ու տնօրեն դարձավ կայսրիկների տիրույթների վրա։

Աբու-լ-Վարդ II-ը 964 թ. Նաջա զորավարից կրած պարտությունից հետո մահացավ[64]։ Սայֆ ալ-Դաուլան ևս մեկ անգամ կարողացավ Հայաստան գալ «գրավելու կայսրիկների քաղաքները և վերադարձավ 966 թ. հունվար ամսին»[65]։

Սայֆ ալ-Դաուլան մինչ Հայաստանի վրա արշավելը Նփրկերտում սպանել էր տվել Նաջային։ Ինչպես տեսնում ենք, Համդանյանները տիրում են կայսրիկների նախկին տիրույթներին, սակայն մինչև 967 թ., երբ մեռավ Սայֆ ալ-Դաուլան[66]։ Սրանից հետո այս տարածքի ստատուսի մասին ստույգ տեղեկություն չկա։ Ըստ Ասողիկի 968 թ.[67] և ըստ Իբն-ալ-Ասիրի 969/970 թթ.[68] Նիկեփոր կայսեր եղբորորդին՝ Վարդ Փոկասը պաշարեց Մանազկերտը և գրավելուց հետո հիմնահատակ կործանեց նրա պարիսպները։

974 թ. կայսր Հովհան Չմշկիկը Ամիդի վրա արշավելիս «կամեցաւ զմուտս յաշխարհն Հայոց առնել»[69]։ Աշոտ III-ի զորքը բանակել էր Հարքում[70], ուր այն կարող էր գալ Բագրևանդի և Ապահունիքի վրայով։ Աշոտ III-ը Ապահունիքը և Հարքը նորից պետք է Բագրատունյաց Հայաստանի կազմը մտցրած լիներ 969—975 թթ. միջև, քանի որ Մեծ Հայքի հարավ-արևմտյան մասում Համդանյանների տեղում հաստատված Մրվանյանների քրդական ամիրայությունը իր գոյության առաջին իսկ տարվանից սկսում է ընդարձակվել դեպի հյուսիս։

Մրվանյան Բատի առաջին նվաճումներից եղել են Նփրկերտը, Խլաթը՝, իսկ Իբն ալ-Ասիրի հաղորդումից երևում է, որ նաև Արճեշը[72], որին հաջորդել

թում է Կարինից հյուսիս գտնվող Արծն քաղաքի հետ։ Այս շփոթումը, կարծում ենք, հետևանք էր այն բանի, որ «XI դարի վերջից, սելջուկների կողմից Արծն քաղաքի կործանումից հետո, Կարինը կոչվում էր նաև Arzan-ar-Rum, որից՝ Արզրում և այժմյան Էրզրում» (Ս. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխարհացույցի, Երևան, 1963, էջ 58)։

[63] Բյուզանդացիների հաջողությունները այս ժամանակաշրջանում պայմանավորված էին Սայֆ ալ-Դաուլայի խիստ գրաղվածությամբ այլ տեղերում։

[64] Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 157։

[65] Նույն տեղում։

[66] Նույն տեղում, էջ 158։

[67] Ասողիկ, էջ 183։

[68] Ibn al-Athir, VIII, 445, տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 185։

[69] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 17։

[70] Նույն տեղում։

[71] Ասողիկ, էջ 192։

[72] Ibn al-Athir, IX, 25 (տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 193)։

էր Մանազկերտը մոտ 976 թ.։ Ինչպես տեսնում ենք, Բատը տիրանում է Համդանյանների ու նաև կայսրիկների նախկին տիրույթներին։ Եվ նախորդների նման նրա շահերը, բնականաբար, բախվում են Բյուզանդիայի նվաճողական շահերին։ Վարդ Սկլերոսի ապստամբության ժամանակ «Խլաթայ և Նփրկերտոյ ամիրայն Բատն վերստին շինէ զքաղաքն Մանազկերտ. և սրով և գերութեամբ անմարդացոյց զգաւառն Տարօնոյ, յաւարի առեալ զքաղաքն Մուշ»[73]։

Դավիթ Կյուրապաղատը միայն Բատի մահվանից հետո (990 թ.) է կարողանում տիրել Մանազկերտին։ Այնուհետև ամիրա Մամլանը արշավելով հասնում է Ծաղկոտն, բայց տեսնելով հայ-վրացական միացյալ ղորքը, չի համարձակվում մարտի բռնվել և հեռանում է[74]։

Այսպիսով, Դավիթ Կյուրապաղատին միայն X դարի վերջին տասնամյակում է հաջողվում նվաճել Ապահունիքը Մանազկերտ կենտրոնով, ինչպես նաև, ամենայն հավանականությամբ, Հարքը։ Սակայն այդպես հեշտությամբ Մրվանյանները չէին հրաժարվի իրենց համար չափազանց կարևոր հենակետ հանդիսացող Մանազկերտից։ Առջևում դեռևս 998 թ. Ծումբի ճակատամարտն էր[75], որից հետո միայն կարելի է խոսել Դավիթի կողմից Ապահունիքին տիրելու մասին։ Սակայն Դավիթը 1000 թ. մահացավ և նրա տիրույթները անցան Բյուզանդիային։

Այսպիսով, Մանազկերտը և հարևան տերիտորիաները եղել են արաբա-բյուզանդական պայքարի հանգուցակետերից մեկը։ Պայքարը այս շրջանին տիրելու համար X դարի առաջին քառորդից ավելի է տևում, որովհետև Բյուզանդիան, օգտվելով խալիֆայության քայքայումից, խորանում է դեպի արևվելք և ձեռնարկում «Սուղուրի» Ռիկունքային գոտին նվաճելուն։ Նշված տերիտորիայի կարևորությունով էր պայմանավորված նաև այն, որ կայսրիկների շուրջ Հարյուրամյա տիրապետության օրոք պայքարը չթուլացավ։ Կարելի է ասել, որ հիշյալ տերիտորիան X դարում Արևելքի ամենաբարդ միջազգային կոնֆլիկտների կետերից մեկն էր։ Ուստի պատահական չէ, որ գտնվելով կայսրիկների ձեռքում, պարբերաբար ենթարկվում էր հայ Բագրատունիներին և Բյուզանդիային, իսկ կարճատև ժամանակ՝ նաև Համդանյաններին։ X դարի երրորդ քառորդում որոշ ժամանակ նորից անցնում է հայ Բագրատունիներին, սակայն հետո քուրդ Մրվանյանների բաժինն է դառնում։ Վերջիվերջո Դավիթ Կյուրապաղատի միջոցով նրան տիրանում է Բյուզանդիան։ Եվ վերջապես, այս շրջանի կարևորության մասին ամենից պերճախոս վկայությունն այն է, որ կայսրությունը, 1071 թ. այստեղ պարտություն կրելով թուրք-սելջուկյան հրոսակախմբերից, այլևս ի վիճակի չեղավ վերականգնել իր դիրքերը Արևելքում և այդ պարտությունով սկիզբ դրվեց Բյուզանդական կայսրության անկմանը։

---

[73] Ասողիկ. էջ 192։ Վարդ Սկլերոսի ապստամբության և Բատի այս ավերիչ արշավանքի ժամանակ է, որ Վասիլ II-ը Դավիթ Կյուրապաղատից օգնություն է խնդրում, փոխարենը խոստանալով վերը նշված տարածքները։ Վարդ Փոկասի պարտությունից (989 թ.) հետո է, որ Դավիթը ստիպված է լինում ոչ միայն կայսրությունից «նվեր» ստացած, այլ նաև իր իսկ սեփական տիրույթները կտակել Վասիլ II-ին։

[74] Ասողիկ. էջ 266—267։

[75] Նույն տեղում, էջ 271—273։

МАНАЗКЕРТ В СФЕРЕ АРАБО-ВИЗАНТИЙСКОГО ПРОТИВОБОРСТВА

(Вторая пол. IX—X вв.)

Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

Ашот I Багратуни (886—890), еще будучи «князем князей» Армении, в 880 г. особой грамотой признал владетельные права кайсиков на Маназкерт и близлежащие крепости на условиях вассалитета. При Смбате I Багратуни (890—913) в конце IX в. кайсики восстали. Целью похода Смбата I на Маназкерт в 902 г. было не только усмирение кайсиков, но и задержание по заранее выработанному с византийцами плану объединенного арабского войска, спешившего на помощь арабам Карина, куда совершил поход доместик схолл Катакалон.

Кайсики снова выходят из-под вассальной зависимости армянских Багратидов, вероятно, не после смерти Смбата I, как сообщает Константин Багрянородный, а немного раньше, в 908 г., воспользовавшись опустошительным походом эмира Атрпатакана Юсуфа.

В результате походов Иоанна Куркуаса кайсики, видимо, на короткое время подчинялись империи. Эпизодический характер носил поход Варда Фоки на Маназкерт в 969 г. Притязания империи на территорию кайсиков выражались, с одной стороны, согласно принципу «вассал моего вассала — мой вассал», если кайсики рассматривались как вассалы армянских Багратидов; с другой стороны, считалось, что они находятся в прямой зависимости от империи, так как имперские войска завоевывали их земли (что, однако, носило временный характер). В этом отношении не случайно, что за помощь, ожидаемую от Давида Куропалата для подавления восстания Варда Склиры (976—979), Василий II наряду с территориями, до этого времени так или иначе аннексированными империей, обещает также Харк и Апахунник, которые еще предстояло отнять у Мервани́дов. Эти области снова отошли к армянским Багратидам между 969—975 гг.

Только в конце X в. Давид Куропалат на короткое время окончательно завоевал у Мервани́дов обещанные ему империей территории в этой части Армении, которые вместе с его собственными владениями перешли после его смерти в 1000 г. к империи согласно оставленному им завещанию.

Значение Маназкерта и окружающих его территорий как важного военно-стратегического региона подчеркивается также последствиями поражения, которое империя потерпела от турок-сельджуков в битве при Маназкерте в 1071 г.